[illegible], [illegible], [illegible]:

Այսօր մեր դպրոցում կողք-կողքի աշխատում է 7 նախկին աշակերտ, բայց արդեն՝ հասուն մանկավարժի կոչումով: Ուրախանում ես նրանց լավ աշխատանքով: Իսկ երբ հեռվից՝ Մայր հայրենիքից, լսում ես քո նախկին աշակերտի՝ Տաճատ Վարդապետյանի շախմատի կայծակնային հաղթանակի մասին լուրը, չես կարողանում զսպել հուզմունքդ, ուրախությունդ ու հրճվանքդ:

Հունիսի 23-ին հավաքվել էինք ուսուցչանոցում: Եվ հանկարծ այդ ավետիսն իմացանք: Բոլորը խոսում էին, հպարտանում, ողջունում հեռվից: Զանգահարեցինք, շնորհավորեցինք: Եվ, իհարկե, հրաշք էր տեղի ունեցել… «Վրաստան» թերթն արդեն գրել է այդ մասին, բայց գոնդուրացիներս այսօր հաճույքով ենք կրկնում, որ 2014թ. հունիսի 22-ին, ժամը 22-ին, Երեւանի «Գաֆեսճյան» կենտրոնում ՀՀ Ազգային ժողովի «Հանրապետական» խմբակցության անդամ Տաճատ Վարդապետյանը շախմատի կայծակնային (բլից) խաղի ժամանակ հաղթել է շախմատի աշխարհի չեմպիոն, նորվեգացի Մանգուս Կարլսենին 3,5 րոպեին, 64-րդ քայլում՝ ձին փոխանակելով թագուհու հետ:

Ասեմ նաեւ, որ Տ.Վարդապետյանը բազմակողմանի զարգացած մարդ է: Նա ե՛ւ բանաստեղծ է, ե՛ւ հռետոր, ե՛ւ ատենաբան, ե՛ւ տնտեսագետ, ե՛ւ հիանալի ասմունքող ու երգիչ, բառիս բուն իմաստով՝ Մարդ: Հիշում եմ՝ դպրոցական տարիներին շախմատի առաջնության ժամանակ մի քանի անգամ մասնակցեց ու հաղթեց: Իսկ հետո՝ 1983 թվականին, մասնակցեց Վրաստանի շախմատի սպարտակիադային եւ դարձյալ հաղթեց:

Նրա որդին՝ Աշքանազը, 9 տարեկան հասակում մասնակցեց Թեհրանում տեղի ունեցած շախմատի մրցումներին եւ զբաղեցրեց առաջին հորիզոնականը: Եղբայրը՝ Սամվելը, հոյակապ շախմատ խաղացող է: Այդ սերը նրանց մեջ սերմանել է հայրը՝ Մարտուն Վարդապետյանը: Տ.Վարդապետյանը լավ երգում է շարականներ, որը ժառանգել է իր Տաճատ պապից: Տաճատը հոգու ամուր թելերով կապված է Ջավախք աշխարհի, մանավանդ, հայրենի գյուղի՝ Փոքր Գոնդուրայի հետ: Շուտ-շուտ այցելում է հայրենի եզերք: Բոլորը գիտեն նրան, ինչպես ասում են՝ մեծի հետ մեծ է, փոքրի հետ՝ փոքր:

Տաճատ ջան, Աստված քեզ հետ: Թող շատ լինեն քեզ ընդօրինակողները:

[illegible]
[illegible]
[illegible].